ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ
2017 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2018

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան……3

ԲԱԺԻՆ 1.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները……4

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը……4

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……5

ԲԱԺԻՆ 2.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……6

ԲԱԺԻՆ 3.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……8

Եզրակացություն……9

Հղումներ օգտագործված նյութերին……10

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի 18-րդ կետի [Որոշում 1] և արտացոլում է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) բնականոն գործունեության ապահովմանն ուղղված 2017 թվականի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) [Որոշում 2] մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ներդրումային ծրագրով համաձայնեցված և փաստացի կատարված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով ներդրումային ծրագիրը և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր ձեռք բերել Ընկերության աշխատակիցների տեղափոխման համար անհրաժեշտ ավտոբուսներ, վարչական անձնակազմի համար մարդատար մեքենա, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով՝ ժամանակակից պայմաններին համապատասխանող համակարգիչներ և աքսեսուարներ, լուծել բնապահպանական խնդիրներ, հիմնանորոգել վարչական շենքը: Ներդրումային ծրագրի ընդհանուր ծավալը կազմել է 78,57[1] մլն դրամ:

Նկար 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը ըստ հիմնական ուղղությունների միջև:

Նկար 1



[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը, բացառությամբ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման գների:

Ինչպես երևում է Նկար 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 35,6%-ը, նախատեսված էր ավտոտրանսպորտային միջոցների, մասնավորապես երկու ՊԱԶ 32053 մակնիշի ավտոբուսի և վարչական անձնակազմի համար մեկ Տոյոտա Քեմրի ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով:

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ 2017 թվականի ընթացքում իրականացվել են 93,52 մլն դրամի ներդրումներ, որոնք ամբողջությամբ հանձնվել են շահագործման:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների նպատակային ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		2017 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		հազար դրամ	%	հազար դրամ	%	%
1	Սարքավորումների ձեռքբերում և տեղակայում	2,600.0	3,3%	1,185.0	1,7%	45,6%
2	Ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերում	28,000.0	35,6%	37,650.0	54,0%	134,5%
3	Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում	6,770.0	8,6%	5,740.1	8,2%	84,8%
4	Վարչական շենքի հիմնանորոգում	19,700.0	25,1%	19,595.0	28,1%	99,5%
5	Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ներդրումներ	16,500.0	21,0%	0	0,0%	0,0%
6	Տեսահսկման համակարգի տեղադրում	5,000.0	6,4%	5,600.0	8,0%	112,0%
	Ընդամենը	**78,570.0**	**100%**	**69,770.1**	**100%**	**88,8%**

Ընկերությունն իրականացրել է հանձնաժողովի հետ չհամաձայնեցված **23,76** մլն դրամի ներդրումներ: Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ներդրումները չեն իրականացվել: Արդյունքում Ընկերության 2017 թվականի Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը կազմել է 88%:

ԲԱԺԻՆ 2.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Սարքավորումների ձեռքբերմանն ու տեղակայմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվում էր իրականացնել 2,6 մլն դրամի ներդրումներ՝ Հ/Օ (հետադարձ օսմոս) համակարգի ծծմբական թթվի դոզավորման պոմպի ձեռքբերման նպատակով, որը փաստացի ձեռք է բերվել և շահագործման հանձնվել 1,19 մլն դրամով:

Ավտոտրանսպորտային միջոցների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 28,0 մլն դրամ՝ աշխատակիցների տեղափոխման համար երկու ՊԱԶ 32053 մակնիշի ավտոբուս և վարչական անձնակազմի համար մեկ Տոյոտա Քեմրի ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով:

Փաստացի ձեռք են բերվել և շահագործման են հանձնվել 37,65 մլն դրամի ներդրումներ՝ մեկական ՊԱԶ 32053, ԳԱԶ A64R42 և վարչական անձնակազմի համար Տոյոտա Քեմրի մակնիշների ավտոտրանսպորտային միջոցներ ձեռք բերելու նպատակով:

Նշված ենթաուղղությամբ իրականացված ներդրումները գերազանցում են համաձայնեցված ներդրումների ծավալը 9,65 մլն դրամով:

Համակարգչային տեխնիկայի ձեռքբերմանն ուղղված ներդրումներ

Այս ենթաուղղությամբ նախատեսվում էր ներդնել 6,7 մլն դրամ: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի ձեռք են բերվել և շահագործման հանձնվել 5,7 մլն դրամի համակարգչային տեխնիկա:

Նշված ուղղությամբ ձեռք են բերվել 2 էլեկտրոնային կրիչներ, որոնք ներդրումային ծրագրի տարր չեն հանդիսանում և դրանց ձեռքբերմանն ուղղված ծախսերը ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Վարչական շենքերի հիմնանորոգմանն ուղղված ներդրումներ

Վարչական շենքերի հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով Ընկերությունը նախատեսում էր իրականացնել 19,7 մլն դրամի ներդրումների, որոնք ուղղվելու են Ընկերության գլխավոր տնօրենի աշխատասենյակի և ընդունարանի, ինչպես նաև աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցի հիմնանորոգմանը: Նշված աշխատանքներն իրականացվել են 19,6 մլն դրամով:

Նշված ենթաուղղությամբ իրականացված աշխատանքների կատարողական ակտի ուսումնասիրության արդյունքում սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը նվազեցվել է 5,12 մլն դրամով:

Տեսահսկման համակարգի տեղադրմանն ուղղված ներդրումներ

Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել 5,0 մլն դրամ: Փաստացի իրականացվել և շահագործման են հանձնվել 5,6 մլն դրամի ներդրումներ: Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող 0,6 մլն դրամը ենթակա է նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

ԲԱԺԻՆ 3.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման նպատակով վերլուծության ընթացքում իրականացվել են հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալների համադրում: Արդյունքում, Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 10,25 մլն դրամով: Ընկերությունն իրականացրել է նաև 23,77 մլն դրամի ներդրումային ծրագրով նախապես չհամաձայնեցված ձեռքբերումներ:

Նշված ներդրումները նվազեցվել են ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցներիի օտարման (վաճառքի) արժեքը՝ 0,6 մլն դրամ, նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

5,12 մլն դրամ նվազեցվել է կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ակտերում առկա գումարների և շուկայական գների համեմատության արդյունքում:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները, ստորև՝ աղյուսակ 2-ում ներկայացված է Ընկերության կողմից 2017 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 2

(մլն դրամ)

1	**2017 թվականի ներդրումային ծրագրով հաստատված ներդրումների ընդհանուր ծավալը**	**78.57**
2	2017 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ներդրումների ծավալը	**93.53**
3	Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝	39.77
3.1	Ներդրումային ծրագրով չհամաձայնեցված ներդրումներ	23.77
3.2	Օտարված (վաճառված) և լուծարված հիմնական միջոցներ	0.63
3.3	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	10.25
3.4	Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքներից նվազեցված	5.12
4	2017 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը	**53.76**

Եզրակացություն

Ամփոփելով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գործունեության արդյունքները նշենք, որ 2017 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 88,8%-ով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 95,92 մլն դրամի ներդրումներ, որից 93,53 մլն դրամի ներդրումները հանձնվել են շահագործման:

Շահագործման հանձնված հիմնական միջոցներից 39,77 մլն դրամի ներդրումները, ընդհանուրի 42%-ը, համարվել են ոչ արդյունավետ և չեն ներառվել փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում: Արդյունքում 2017 թվականին շահագործման հանձնված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 53,76 մլն դրամ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №540Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին»

Որոշում 2- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №393Ա որոշումը «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ուղղված 2017 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»

Հաշվետվություն - «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին ընկերության 2018 թվականի մայիսի 11-ի №01/313-18 գրությամբ ներկայացված հաշվետվություն